ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ՝ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՈՎ

Երևան 2023

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու է միմիայն Քաուսթերփարթ Ինթերնեշնլը, և այն կարող է չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ-ի կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Բովանդակություն

Հապավումներ 1
1. Ներածություն 2
2. Սոցիալական ձեռնարկատիրության ընդհանուր բնութագիրը 2
3. Սոցիալական ձեռնարկատիրության իրավական կարգավորումը 4
3.1 Սոցիալական ձեռնարկատիրության սահմանումը 4
3.2 Իրավական կարգավորումների մոտեցումները. 5
3.3 Սոցիալական ձեռնարկության ճանաչումը՝ իրավական տարբերանշանով 6
4. Եզրակացություն 10
5. Առաջարկություններ 11

Հապավումներ

ԱԻՍՁ	Աշխատանքի ինտեգրման սոցիալական ձեռնարկություն
ԵՄ	Եվրոպական միություն
ՀՍՁԱ	Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիա
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՇՀԿ	Հանրային շահ հետապնդող կազմակերպություն
ՍՁ	Սոցիալական ձեռնարկատիրություն
ՏՀՁԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

1. Ներածություն

Սույն փաստաթուղթը մշակվել է Քաունթերփարթ ինթերնեշնլ կազմակերպության և հայաստանյան «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող «Գործուն քաղաքացիական հասարակություն» ծրագրի շրջանակներում և ուղղված է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ֆինանսական կայունության հաստատմանը: Փաստաթղթի մշակման ընթացքում կատարվել է միջազգային կազմակերպությունների մոտեցումների, տարբեր ժամանակահատվածներում իրականացված ծրագրերի արդյունքների, ընտրված Եվրոպական միության (ԵՄ) երկրների իրավական կարգավորումների փաստաթղթային ուսումնասիրություն, որի հիման վրա ներկայացվել է սոցիալական ձեռնարկատիրության (ՍՁ) ոլորտի հակիրճ նկարագրությունը և ՍՁ-ների կարգավորման արդի մոտեցումները:

Ուսումնասիրության ընթացքում իրականացվել է քննարկում Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիա (ՀՍՁԱ) անդամ կազմակերպությունների ներկայացուցիչների և ՍՁ ոլորտի փորձագետների հետ, որի արդյունքները հաշվի են առնվել սույն փաստաթղթում ներկայացված մոտեցումներում և առաջարկություններում: Սույն փաստաթղթի մշակման նպատակը սոցիալական ձեռնարկատիրության իրավական ճանաչման առավել իրատեսական, բայց միևնույն ժամանակ գործուն և համակարգային տարբերակ ներկայացնելն է, որը կարող է դառնալ ոլորտի հետագա զարգացման հիմք:

2. Սոցիալական ձեռնարկատիրության ընդհանուր բնութագիրը

Վերջին տասնամյակների ընթացքում Եվրոպական երկրներում արձանագրվել է ՍՁ դերի և կարևորության էական աճ[1]: 2011 թ. Եվրոպական հանձնաժողովի կողմից մեկնարկեց Սոցիալական ձեռնարկատիրություն նախաձեռնությունը, որի շրջանակներում հաստատվեց ՍՁ-ների համար բարենպաստ միջավայրի ձևավորման ուղղությամբ ԵՄգործողությունների ծրագիրը[2]: Ծրագրի մեկնարկից ի վեր 16 ԵՄ անդամ պետություններ ընդունեցին ՍՁ ոլորտը կարգավորող նոր օրենսդրություն[3], ինչը ևս մեկ անգամ ընդգծում է ՍՁ-ների դերը և զարգացման կարևորությունը Եվրոպական միջավայրում:

ՍՁ-ները միավորում են ձեռնարկատիրությունը և սոցիալական նպատակները, որի պատճառով դասակարգվում են որպես «երրորդ սեկտոր»՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների հետ միասին մաս կազմելով սոցիալական

[1] *Social enterprises and their ecosystems in Europe, comparative synthesis report*, European Commission, 2020, (անգլերեն, էջ 26) https://ec.europa.eu/social/BlobServlet?docId=22304&langId=en
[2] *Impact of the European Commission's Social Business Initiative (SBI) and its Follow-up Actions, final report*, European Commission, 2020, (անգլերեն, էջ 11), https://ec.europa.eu/social/main.jsp?catId=738&langId=en&pubId=8373&furtherPubs=yes
[3] *Նույն տեղում*

տնտեսությանը[4]: ՍՁ-ների աճող դերը տնտեսությունում և աշխատաշուկայում դժվար է թերագնահատել: ԵՄ ողջ աշխատուժի 6.2 տոկոսը աշխատում է սոցիալական տնտեսության ձեռնարկություններում, որոնք կազմում են տնտեսվարողների մոտ 10 տոկոսը[5]: Բացի այդ, բազմիցս մատնանշվել է ՍՁ-ների դիմացկունությունը բարդ տնտեսական իրավիճակներում: Օրինակ՝ 2008 թ. ֆինանսական ճգնաժամի պայմաններում որոշ երկրներում ավելացել է ՍՁ-ների կողմից ստեղծված աշխատատեղերի քանակը[6], իսկ համավարակի պայմաններում ՍՁ-ները էականորեն ավելի դիմացկուն են գտնվել համեմատած դասական ձեռնարկությունների[7]: Ոլորտները, որտեղ գործունեություն են ծավալում ՍՁ-ները, տարածվում են առողջապահական, մշակութային, կրթական և արտադրական ոլորտներից մինչև վերամշակումն ու կառուցապատումը[8]:

Հայաստանում ՍՁ ոլորտը դեռևս գտնվում է կայացման փուլում: ՍՁ-ների ձևավորման և զարգացման մեջ կարևոր դեր են խաղացել մի շարք միջազգային ծրագրեր, որոնց աջակցությամբ հիմնվել են բազմաթիվ ՍՁ-ներ և բարձրացվել են դրանց կարողությունները [9] : Ոլորտի վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություններ տևական ժամանակ չեն իրականացվել:

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) առկա չէ ՍՁ ոլորտը կարգավորող իրավական դաշտ, նախատեսված չեն հատուկ կազմակերպաիրավական ձևեր՝ սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար: Ըստ 2016 թ. իրականացված ուսումնասիրության՝ ՀՀ-ում տվյալ ժամանակահատվածում գործող փաստացի ՍՁ-ների 43.3 %-ը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ էին, 36.7 %-ը հասարակական կազմակերպություններ, 16.7 %-ը հիմնադրամներ[10]: Ըստ փորձագետների՝ COVID-19 համավարակի սկզբում ՀՀ-ում արդեն առկա են մոտ 100 ՍՁ-ներ, որոնց ճնշող մեծամասնությունը տեղակայված է մարզերում[11]: Առավել ակտիվ ՍՁ-ների մեծ մասը անդամակցում են ՀՍՁԱ-ին:

ՀՀ-ում ՍՁ ոլորտի կայացման և համակարգային զարգացման ուղղությամբ բազմիցս մատնանշվել է պետության ներգրավվման և աջակցման անհրաժեշտությունը: 2019 թվականին անցկացված «Սոցիալական ձեռնարկատիրության համաժողովի» ընթացքում ոլորտի արձանագրված խնդիրներից են եղել ՀՀ կառավարության կողմից ՍՁ-ների՝ որպես տնտեսության առանձին մասնակցի, չճանաչելը և համակարգված քաղաքականության

---

[4] *Policy framework and legal forms of social enterprise in Central and Eastern Europe*, Daniela Staicu, 2017, (անգլերեն), https://www.researchgate.net/publication/319342713_Policy_framework_and_legal_forms_of_social_enterprise_in_Central_and_Eastern_Europe

[5] *Social economy in the EU*, European Commission, (անգլերեն), https://single-market-economy.ec.europa.eu/sectors/proximity-and-social-economy/social-economy-eu_en

[6] *Job Creation and Local Economic Development 2018: Preparing for the Future of Work*, OECD, 2018, (անգլերեն, էջ 130-131), https://prospectcv2030.com/wp-content/uploads/2019/12/Job_creation2018.pdf

[7] *No going back: state of social enterprise survey*, SEUK, 2021, (անգլերեն, էջ 4) https://knowledgecentre.euclidnetwork.eu/2022/01/12/european-social-enterprise-monitor-report-2020-2021-2/

[8] *Designing Legal Frameworks for Social Enterprises Practical Guidance for Policy Makers* , OECD, 2022, (անգլերեն, էջ 18), https://www.oecd.org/publications/designing-legal-frameworks-for-social-enterprises-172b60b2-en.htm

[9] *Social Economy in Eastern Neighbourhood and in the Western Balkans, Country report – Armenia*, 2018, (անգլերեն), https://ec.europa.eu/docsroom/documents/29642/attachments/2/translations/en/renditions/pdf

[10] *Նույն տեղում,* էջ 8

[11] *Social Entrepreneurship in Armenia and Georgia (the overview of the social economy of Armenia: Social Enterprises of Shirak, Tavush and Lori marzes), report on market assessment,* Anna Malkhasyan, (անգերեն, էջ 4), https://euneighbourseast.eu/wp-content/uploads/2021/07/market-assessment-social-enterprises-am-may-2020.pdf

բացակայությունը[12]: Նախկինում ոլորտի մասնակիցների կողմից ՍՁ իրավական ճանաչմանն ուղղված աշխատանքները դեռևս շոշափելի արդյունքներ չեն տվել: Պետության կողմից ՍՁ-ների իրավական ճանաչումը և վերջիններիս համակարգմանն ուղղված գործողությունները կարող են լինել ոլորտի զարգացմանը միտված առաջին էական քայլերից, որոնք կնպաստեն տնտեսության այս ինքնատիպ հատվածի կայացմանը և հանրային օգտակարության բարձրացմանը:

3. Սոցիալական ձեռնարկատիրության իրավական կարգավորումը

3.1 Սոցիալական ձեռնարկատիրության սահմանումը

Թեև սոցիալական ձեռնարկատիրության ձևակերպման մեկ միասնական մոտեցում առկա չէ, ԵՄ տարածաշրջանում արդեն հնարավոր է ուրվագծել վերջինիս վերաբերյալ առավել ընդունված մոտեցումները: 2011 թ. մեկնարկած «Սոցիալական ձեռնարկատիրություն նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում մշակված սահմանումը այժմ դարձել է ԵՄ մոտեցման հիմքը[13]: Ըստ մոտեցման՝ սոցիալական ձեռնարկատիրությունը գործունեություն է, որի պարագայում.

1. ընդհանուր բարօրության սոցիալական նպատակը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեության պատճառը, հաճախ սոցիալական նորարարության բարձր մակարդակի տեսքով,
2. շահույթը հիմնականում ներդրվում է սոցիալական նպատակներին հասնելու համար,
3. կազմակերպչական մոտեցումները կամ սեփականության համակարգը արտացոլում է ձեռնարկության առաքելությունը՝ օգտագործելով ժողովրդավարական կամ մասնակցային սկզբունքները կամ կենտրոնանալով սոցիալական արդարության վրա[14]:

Համանման չափանիշներ են դրված Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից ընդունված մոտեցման հիմքում, ըստ որի՝ ՍՁ է համարվում «ցանկացած մասնավոր գործունեություն, որն .

4. իրականացվում է հանրային շահերից ելնելով,
5. կազմակերպված է ձեռնարկատիրական ռազմավարությամբ,
6. ունի հիմնական նպատակ ոչ թե ունենալ առավելագույն շահույթ, այլ հասնել որոշակի տնտեսական և սոցիալական նպատակների,

[12] *Սոցիալական ձեռնարկատիրության համաժողով*, ամփոփիչ զեկույց, 2019, https://shorturl.at/fnvSY
[13] *Social economy in the EU*, European Commission, (անգլերեն), https://single-market-economy.ec.europa.eu/sectors/proximity-and-social-economy/social-economy-eu_en
[14] Social enterprises, European Commission, (անգլերեն), https://single-market-economy.ec.europa.eu/sectors/proximity-and-social-economy/social-economy-eu/social-enterprises_en

7. կարող է նորարարական լուծումներ գտնել սոցիալական ներառումը չապահովելուգործազրկության խնդիրների համար[15]:

Ընդհանրացնելով ՏՀԶԿ և ԵՄ մոտեցումները, այն կարելի է ձևակերպել որպես *ձեռնարկատիրական գործունեություն, որի հիմնական նպատակը ոչ թե առևտրային գործունեությունից ստացված շահույթի բաշխումն է մասնակիցների միջև, այլ դրա ուղղումը սոցիալական խնդիրների լուծմանը:*

Այս ձևակերպումից կարելի է եզրակացնել, որ շահույթ ստանալուն ուղղված գործունեությունն ածանցվում է ՍՁ գործունեության հիմնական բաղադրիչից՝ սոցիալական դրական փոփոխություն իրականացնելու առաքելությունից: Այսինքն՝ ՍՁ առաքելությունն է ձգտել սոցիալական խնդիրների լուծմանը՝ ֆինանսական կայունություն հետապնդելով: Ըստ այդմ սոցիալական ձեռնարկատիրությունը տարբերվում է կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունից, որի պարագայում սոցիալական դրական փոփոխություն բերելը ձեռնարկատիրական գործունեության հիմնական նպատակը չէ:

ՍՁ ինքնուրույն տեսակներից են աշխատանքի ինտեգրման սոցիալական ձեռնարկությունները [16], որոնց մոդելը կառուցված է խոցելի խմբերի ներկայացուցիչներին աշխատանքում ներգրավելու մեջ: ՍՁ-ները կարող են հետապնդել նաև բնապահպանական, առողջապահական և այլ նպատակներ:

3.2 Իրավական կարգավորումների մոտեցումները.

ՍՁ-ների իրավական կարգավորման մոտեցումները կարելի է պայմանականորեն բաժանել երկու տեսակի[17]: Առաջին մոտեցման պարագայում օրենսդրությամբ նախատեսվում է իրավաբանական անձի հատուկ կազմակերպաիրավական ձև կամ ձևեր: Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում 2006 թվականին օրենսդրորեն ամրագրվել է «Հանրային շահ հետապնդող կազմակերպության» ձևը[18], որի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթի հիմնական մասը «արգելափակված» է, այսինքն՝ չի բաշխվում բաժնետերերին և ներդնողներին, այլ ուղղվում է հանրօգուտ գործունեությանը[19]: Այլ երկրներում, օրինակ՝ Իտալիայում, Ֆրանսիայում և Չեխիայում ՍՁ-ները գործում են որպես կոոպերատիվների առանձին տեսակ՝ սոցիալական կոոպերատիվներ: Որոշ երկրներում առկա են ՍՁ-ների համար նախատեսված մի քանի կազմակերպաիրավական ձևեր: Օրինակ՝ Իսպանիայի պարագայում դրանք երեքն են՝ աշխատանքի ինտեգրման

---

[15] *Social entrepreneurship & Social entreprises,* OECD, (անգլերեն), https://www.oecd.org/cfe/leed/social-economy/social-entrepreneurship.htm
[16] *Work Integration and Social Enterprises,* Kate Cooney et al, 2022, (անգլերեն, էջ 7) https://knowledgehub.unsse.org/knowledge-hub/work-integration-and-social-enterprises/
[17] *Designing Legal Frameworks for Social Enterprises Practical Guidance for Policy Makers* , OECD, 2022, (անգլերեն, էջ 7), https://www.oecd.org/publications/designing-legal-frameworks-for-social-enterprises-172b60b2-en.htm
[18] Community interest company (CIC)
[19] *Community interest companies: guidance chapters,* UK government, (անգլերեն), https://www.gov.uk/government/publications/community-interest-companies-how-to-form-a-cic

սոցիալական ձեռնարկություններ, աշխատանքի ապահովման հատուկ կենտրոններ և սոցիալական նախաձեռնության կոոպերատիվներ[20]:

ՍՁ-ների կարգավորման երկրորդ մոտեցումը վերաբերում է իրավական կարգավիճակի ճանաչմանը: Գրականությունում կիրառվում են տարբեր եզրույթներ՝ ՍՁ հավատարմագրում (certification), պիտակում (labeling) և այլն[21]: Այս մոտեցման համատեքստում՝ նախապես սահմանված պահանջների բավարարման պարագայում, կազմակերպությունը կարող է դիմել լիազոր մարմնին և որակավորվել որպես ՍՁ: Պայմանները, որոնց պետք է բավարարի կազմակերպությունը, բովանդակային առումով նույնն են, ինչ ընդհանուր մոտեցման պարագայում՝ շահույթի որոշակի մասը սոցիալական խնդիրների լուծմանն ուղղելը կամ որոշակի համամասնությամբ սոցիալական խոցելի խմբերի ներկայացուցիչներին աշխատանքի ներգրավելը: Այսինքն՝ արդեն գրանցված և գործող կազմակերպությունը իր ցանկությամբ կարող է ճանաչվել որպես ՍՁ:

ՍՁ հավատարմագրումը համեմատաբար նոր մոտեցում է: Տարբեր ընթացակարգերով և չափանիշներով այն այժմ ներդրվում և կիրառվում է մի շարք ԵՄ երկրներում: Ընդ որում, որոշակի տարբերություններով, որակավորումը կիրառելի է ինչպես շահույթ հետապնդող, այնպես էլ չհետապնդող կազմակերպությունների նկատմամբ՝ ելնելով տվյալ պետության իրավական դաշտի առանձնահատկություններից: Մոտեցման դրական կողմերից է այն, որ որակավորվելու համար կարող են դիմել բովանդակային առումով արդեն սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպությունները, մինչդեռ կարգավորման առաջին տարբերակի պարագայում անհրաժեշտ է ստեղծել նոր կազմակերպություն կամ անցնել վերակազմակերպման ընթացակարգով: Այն չի պահանջում իրավական դաշտի ծավալուն փոփոխություններ և կարող է ավելի խնայողական լինել պետության համար:

Մի շարք երկրներում ՍՁ որակավորումը բարեհաջող անցնելու պարագայում կազմակերպությունները ստանում են հատուկ տարբերանշանի կիրառման թույլտվություն, որը կարող են կիրառել իրենց տնտեսական գործունեության, ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման ընթացքում և դրանով տարբերակվել ավանդական ձեռնարկություններից:

3.3 Սոցիալական ձեռնարկության ճանաչումը՝ իրավական տարբերանշանով

ՍՁ որակավորման մոտեցման պարագայում գործում են որակավորող և վերահսկող մարմիններ, որոնք հաճախ նույնանում են: Հիմնականում այն իրականացվում է պետական, առավել հաճախ՝ սոցիալական ապահովության և աշխատանքի ոլորտի լիազոր մարմնի (նախարարության,) կամ պետության կողմից ստեղծված կամ լիազորված կազմակերպության կողմից: Որպես կանոն,

[20] *Social Enterprises in Spain (country report),* Richard Pfeilstetter and Itziar Gómez-Carrasco, 2017, (անգլերեն, էջ 2) http://www.lasociedadcivil.org/wp-content/uploads/2017/12/Pfeilstetter_GomezCarrasco.pdf

[21] *Social entrepreneurship certification and labeling*, Olafs Grigus et al., 2017, (անգլերեն), https://sua.lv/wp-content/uploads/2018/03/SE-labeling-and-certification-Report-2017.pdf

ՍՁ որակավորման գործընթացը իրականացվում է համապատասխան հանձնաժողովների կողմից, որոնց կազմը կարող է բաղկացած լինել ինչպես բացառապես պետական ծառայողներից, այնպես էլ ներգրավել ՍՁ ոլորտի ներկայացուցիչներ և փորձագետներ: Օրինակ՝ Լատվիայում Սոցիալական ապահովության նախարարության հովանու տակ գործող հանձնաժողովի 10 անդամներից 5-ը պետական մարմինների աշխատակիցներ են, մյուս 5-ը՝ ասոցիացիաների և հիմնադրամների ներկայացուցիչներ[22]: Սլովենիայում ՍՁ-ների որակավորումն իրականացնող Սոցիալական տնտեսության խորհրդի անդամներն են բոլոր նախարարությունների ներկայացուցիչներ (բացի Արտաքին գործերի նախարարությունից), երկու ներկայացուցիչ ՍՁ-ներից, մեկ «սոցիալական գործընկեր» և մեկ փորձագետ[23]:

Կարգավորման այս մոդելը որդեգրած մի շարք պետություններում որակավորման գործընթացը բարեհաջող անցած ՍՁ-ներին տրամադրվում է հատուկ տարբերանշանի կիրառման իրավունք: Այն կիրառվում է ՍՁ-ի կողմից իր տնտեսական գործունեության ՝ ծառայությունների մատուցման, արտադրության, առևտրի և գովազդի ընթացքում: Կիրառելով հատուկ տարբերանշանը, ՍՁ-ները ստանում են ընդհանուր ինքնություն և առավել արդյունավետ են հաղորդակցում իրենց առաքելությունը սպառողների և գործընկերների շրջանում:

Տարբերանշանի միջոցով ՍՁ-ների նույնականացման առաջին փորձերից մեկը ներդրվել է Միացյալ Թագավորությունում: Որակավորում անցկացնողը, գնահատողը և տարբերանշան տրամադրողը «Սոցիալական ձեռնարկության տարբերանշան» հանրային շահ հետապնդող կազմակերպությունն է[24]: Ի թիվս այլ որակավորման չափանիշների՝ հավատարմագրման դիմած կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունը պետք է ուղղված լինի սոցիալական խնդիրների լուծմանը, որը պետք է արձանագրված լինի հիմնադիր փաստաթղթերում, ինչպես նաև տարեկան շահույթի առնվազն 51 տոկոսը պետք է ուղղվի սոցիալական խնդիրների լուծմանը[25]: Որակավորման համար դիմած և պահանջներին բավարարող կազմակերպությունները ստանում են տարբերանշանը կիրառելու իրավունք և վճարում են տարեկան անդամավճար: Անդամավճարի դիմաց կազմակերպությունները նաև ստանում են մասնագիտական աջակցություն՝ լավագույն փորձի որդեգրման և ձեռնարկատիրական չափանիշների հետագա զարգացմանն ուղղված անհատականացված խորհրդատվություն: Անդամավճարի չափը կախված է տվյալ կազմակերպության շրջանառությունից[26]:

Ֆինլանդիան, հաշվի առնելով ԵՄ Սոցիալական ձեռնարկատիրություն նախաձեռնության շրջանակում տրված ձևակերպումը, 2011 թ. ստեղծեց «Սոցիալական ձեռնարկություն» տարբերանշանը: Նախաձեռնությունը մշակվել է Տնտեսության և զբաղվածության նախարարության կողմից, իսկ ծրագրի

[22] *Briefer on cutting edge trends in social enterprise regulation*, ECNL, 2019, (անգլերեն, էջ 12) https://ecnl.org/sites/default/files/files/Briefer-on-social-enterprise-regulation.pdf
[23] *Social enterprises and their ecosystems in Europe, Country report Slovenia*, Tatjana Rakar and Zinka Kolarič, 2019, (անգլերեն, էջ 57), https://ec.europa.eu/social/BlobServlet?docId=21575&langId=en
[24] Social enterprise mark CIC, https://www.socialenterprisemark.org.uk/
[25] *Social Enterprise Mark- Eligibility Criteria, 2021, (անգլերեն),* https://www.socialenterprisemark.org.uk/wp-content/uploads/2022/10/SEM-Qualification-criteria-updated-Oct-2022.pdf
[26] *Նույն տեղում*

կատարող է ընտրվել Աշխատանքի ֆիննական ասոցիացիան[27]: Ասոցիացան պատասխանատու է նաև «պատրաստված է Ֆինլանդիայում» և «Ձևավորումը՝ Ֆինլանդիայից» նշանների տրամադրման համար: Նշանը ստանալու և այն կիրառելու իրավունքը ստանալու համար կազմակերպությունը պետք է համապատասխանի մի շարք չափանիշների, որոնցից առաջնայինը սոցիալական բարիքի ստեղծմանը նպաստելն է՝ շահույթի մեծ մասը իր սոցիալական գործունեության մեջ ներդնելու միջոցով[28]: Կազմակերպության կանոնադրությունը կամ համապատասխան փաստաթղթերը պետք է արտացոլեն նշված նպատակը և գործելաոճը: Տարբերանշանի օգտագործման իրավունքը տրվում է մինչև երեք տարի ժամկետով, դիմող կազմակերպությունից գանձվում է անդամավճար, որը նույնպես կախված է վերջինիս շրջանառությունից[29]:

Դանիան ԵՄ առաջին երկիրն էր, որը օրենքի մակարդակում սահմանեց սոցիալական ձեռնարկատիրության հավատարմագրման մոդելը[30]: Ըստ «Գրանցված սոցիալական կազմակերպությունների մասին» օրենքի՝ ՍՁ գրանցվել ցանկացող կազմակերպությունները կարող են դիմել Դանիական ձեռնարկատիրության մարմին՝ «Գրանցված սոցիալական ձեռնարկություն» պիտակը ստանալու: Գրանցման համար կազմակերպությունը պետք է բավարարի օրենքով սահմանված չափանիշներին և պարտավորվում է շահույթի առնվազն 65 տոկոսը ուղղել սոցիալական նպատակներին[31]:

Նշված օրինակներում ՍՁ գրանցումը չի նախատեսում ուղղակի հարկային արտոնություններ: Այդուհանդերձ, հավատարմագրված կազմակերպությունները ակնկալում են պետության և մասնավոր հատվածի կողմից գործընկերության որոշակի նախապատվություն, ինչն արդեն արտացոլվել է որոշ դեպքերում: Օրինակ՝ Դանիայում համայնքները համագործակցության համար նախընտրում են գրանցված ՍՁ-ները՝ ավելի բարձր վստահության պատճառով[32]:

[27] Association for Finnish work, https://suomalainentyo.fi/en/about-us/history/
[28] https://suomalainentyo.fi/en/services/finnish-social-enterprise/rules/
[29] *Social Enterprise Mark's Rules Qualifications and Conditions of the Association for Finnish Work's Social Enterprise mark*, Association for Finnish work, 2021, (անգլերեն), https://suomalainentyo.fi/en/services/member-fees/
[30] *Social entrepreneurship certification and labeling*, Olafs Grigus et al., 2017, (անգլերեն, էջ 24), https://sua.lv/wp-content/uploads/2018/03/SE-labeling-and-certification-Report-2017.pdf
[31] *Registration tool for social enterprises: unleashing the potential of social enterprises through regulation in Denmark*, EC, OECD, (անգլերեն), https://betterentrepreneurship.eu/es/content/registration-tool-social-enterprises-unleashing-potential-social-enterprises-through
[32] *Social entrepreneurship certification and labeling*, Olafs Grigus et al., 2017, (անգլերեն, էջ 25), https://sua.lv/wp-content/uploads/2018/03/SE-labeling-and-certification-Report-2017.pdf

Պետությունը	Միացյալ Թագավորություն	Ֆինլանդիա	Դանիա
Տարբերանշանը			
Հիմնադիրը	«Սոցիալական ձեռնարկության տարբերանշան» ՀՇՀԿ	Տնտեսության և զբաղվածության նախարարություն	Դանիայի Խորհրդարան
Որակավորողը	«Սոցիալական ձեռնարկության տարբերանշան» ՀՇՀԿ	Աշխատողների ֆիննական ասոցիացիա	Դանիական ձեռնարկատիրության մարմին
Դիմորդների կազմակերպությունների թույլատրելի տեսակները	Բոլորը	Բոլորը	Բոլոր սահմանափակ պատասխանատվությամբ կազմակերպաիրավական ձևերը (ներառյալ ասոցիացիաները)
Սոցիալական նպատակներին ուղղվող շահույթի նվազագույն շեմը	51%-ից ավելի	50%-ից ավելի	65%

Որակավորման ընթացակարգեր գործում են նաև ԵՄ այլ երկրներում: Բուլղարիայում 2018 թ. ՍՁ-ները կարող են դիմել «Սոցիալական ձեռնարկության արտադրանք» տարբերանշանը ստանալու համար, որը ստեղծվել է Աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարարության նախաձեռնությամբ [33] : Որոշ երկրներում դասական ՍՁ-ի և Աշխատանքի ինտեգրման սոցիալական ձեռնարկության (ԱԻՍՁ) պարագայում գործում են առանձին տարբերանշաններ ստանալու որակավորման ընթացակարգեր: ԱԻՍՁ-ների որակավորման հիմնական չափանիշը վերաբերում է կազմակերպության աշխատողների շարքում որոշակի համամասնությամբ սոցիալական խոցելի խմբերի ներկայացուցիչներ ներգրավելուն[34]:

ՍՁ տարբերանշանի մոտեցման ակունքները կարելի է գտնել ձեռնարկատիրական այլ ոլորտներում, օրինակ՝ ապրանքի ծագումը նկարագրող պիտակները (*օրգանական մթերք, առանց ԳՄՕ* և այլն), էթիկական պիտակները (Fair Trade, Rainforest Alliance և այլն): Նման պիտակների առկայությունը թույլ է տալիս սպառողին ընտրել էկոլոգիապես մաքուր արտադրանք, կամ նախընտրությունը տալ էթիկապես ավելի պատասխանատու ձեռնարկատիրություններին՝ դրանով իսկ աջակցելով արժանապատիվ աշխատանքային պայմանների ամրապնդմանը և շրջակա միջավայրի պահպանությանը:

[33] Registered Certification Mark “Social Enterprise Product”, 2019, (անգլերեն) https://seconomy.mlsp.government.bg/registered-certification-mark-social-enterprise-product/?lang=en
[34] *Briefer on cutting edge trends in social enterprise regulation*, ECNL, 2019, (անգլերեն, էջ 5) https://ecnl.org/sites/default/files/files/Briefer-on-social-enterprise-regulation.pdf

4. Եզրակացություն

Սոցիալական ձեռնարկությունները կարևոր դեր են խաղում սոցիալական, տնտեսական և բնապահպանական մարտահրավերներին դիմակայելու գործում՝ այդ կերպ թեթևացնելով պետության սոցիալական բեռը: Իրենց ուրույն ձեռնարկատիրական ձևաչափի շնորհիվ ՍՁ-ները կարող են լրացնել այն ծառայությունների բացը, որը չի կարող տրամադրվել հանրային և մասնավոր հատվածների կողմից[35]: Բացի այդ, ՍՁ-ները հազվադեպ են տեղափոխվում այն համայնքից, որտեղ նախապես գործունեություն են ծավալել[36]: Հաշվի առնելով, որ ՀՀ-ում գործող փաստացի ՍՁ-ների մեծ մասը կենտրոնացած է մարզերում, վերջիններիս զարգացումը կարող է նպաստել համայնքային զարգացմանը:

Սոցիալական ձեռնարկատիրության ճանաչումը կարող է լինել ոլորտի առաջին էական բարեփոխումը: Այդ առումով ՍՁ որակավորման մոդելի որդեգրումը, որպես առաջին քայլ, տարբերվում է իր մատչելիությամբ և խնայողականությամբ՝ ավելի քիչ միջոցներ պահանջելով պետությունից, քան առանձին կազմակերպաիրավական ձև սահմանելը: Ընդ որում, ՍՁ որակավորման և տարբերանշանի կիրառման տարբերակի ներդնումը կարող է լինել ինչպես իրավական կարգավորմամբ՝ օրենքի մակարդակում, այնպես էլ ավելի «փափուկ»՝ համապատասխան քաղաքականության փաստաթուղթ, որոշում և ռազմավարություն ընդունելու և կիրառելու միջոցով[37]:

ՍՁ հավատարմագրման ընթացակարգը կարող է ներդրվել ինչպես ամբողջությամբ պետության հովանու ներքո, այնպես էլ փաստացի գործող ՍՁ-ների ներկայացուցիչների ներգրավմամբ ստեղծված մարմնի միջոցով՝ մշակված քաղաքականությանը համահունչ: Որակավորման մեխանիզմի ներդրման արդյունքում կբարձրանա ՍՁ ոլորտի տեսանելիությունը և կընդգծվի վերջինիս առանձնահատկությունը երկրի տնտեսության մեջ: Գրանցված ՍՁ-ները հնարավորություն կստանան ավելի հստակ հաղորդակցել իրենց առաքելությունը հանրությանը, ներդրողներին և գործընկերներին: Իրավական ճանաչումը և շահույթի վերաներդրման որոշակի նվազագույն շեմ սահմանելը կարող է զերծ պահել ոլորտը չարաշահումներից՝ «կեղծ» ՍՁ-ներից: Սկզբնական փուլում հարկային արտոնություններ չսահմանելը կբացառի խոշոր բիզնեսի կողմից ՍՁ-ն որպես գործիք կիրառելը:

ՍՁ-ների որակավորման մոտեցումը ունի մի շարք առավելություններ՝ նոր կազմակերպաիրավական ձև սահմանելու համեմատ:

- Նոր կազմակերպաիրավական ձև կամ ձևեր սահմանելու համար անհրաժեշտ են լինելու օրենսդրական դաշտի ծավալուն փոփոխություններ և տնտեսական խորը ուսումնասիրություն, որպեսզի նոր իրավաբանական անձի տեսակը, դրա գործունեության և կազմակերպաիրավական

[35] *Նույն տեղում,* էջ 3
[36] *Policy Brief on Social Entrepreneurship Entrepreneurial Activities in Europe*, EC/OECD, 2013, (անգլերեն, էջ 12), https://www.oecd.org/cfe/leed/Social%20entrepreneurship%20policy%20brief%20EN_FINAL.pdf
[37] *Promoting social entrepreneurship in Ukraine,* ECNL, 2021, (անգլերեն, էջ 6), https://ecnl.org/sites/default/files/2021-07/Promoting%20Social%20Entrepreneurship%20in%20Ukraine.pdf

առանձնահատկությունները արտացոլեն տնտեսական իրողությունները և նպատակահարմարությունը:

- Որակավորման ընթացակարգից կարող են օգտվել արդեն գործող և կայացած սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպությունները: Դրանով վերանում է նոր կազմակերպություն ստեղծելու կամ վերակազմակերպվելու համեմատաբար ծախսատար և ավելի բարդ բյուրոկրատական գործընթացը:
- Լիազոր մարմնի կողմից ավելի հեշտ է իրականացնել մշտադիտարկում և գնահատում, քանի որ այն վերաբերելու է միայն որակավորման գործընթացը անցած կազմակերպություններին, որոնց վերաբերյալ տվյալները լինելու են լիազոր մարմնի տրամադրության տակ:
- Տարբերանշանի միջոցով որակավորված ՍՁ-ները կստանան ընդհանուր ինքնություն և կկարողանան ավելի գրավիչ լինել այն ներդրողների համար, որոնք ցանկանում են ստանձնել սոցիալական պատասխանատվություն կամ բարձրացնել սեփական գործարար համբավը, ինչպես նաև ներգրավել մասնագիտացած ներդրողների:

5. Առաջարկություններ

ՍՁ-ների իրավական ճանաչման և որակավորման մոդելի ներդրման համար անհրաժեշտ է սահմանել գործունեության այն հիմնական ուղղությունները, որոնց իրականացումը կհամարվի սոցիալական առաքելություն: Սահմանման ընթացքում ցանկալի է հաշվի առնել ինչպես միջազգային դրական փորձը, այնպես էլ ՀՀ-ում արդեն գործող ՍՁ-ների գործունեությունը: Ցանկալի է որակավորումը բարեհաջող անցած ՍՁ-ների համար մշակել սահմանված ձևի տարբերանշան՝ որը վերջիններս կարող են օգտագործել իրենց ձեռնարկատիրական գործունեության և գովազդի մեջ:

Իրավական ճանաչումը՝ որակավորման մեխանիզմի և տարբերանշանի օգտագործման իրավունքի ներդրմամբ կարող է դառնալ ՍՁ ոլորտի զարգացմանը նպաստելու, կարգավորումների միջազգային լավագույն փորձը հայաստանյան համատեքստում հարմարեցնելու և ներդնելու ուղղությամբ առաջին համակարգային քայլը: Ի տարբերություն ՍՁ-ն որպես իրավաբանական անձի տեսակ սահմանելու՝ այն նվազ ծախսատար է և չի պահանջում ծավալուն իրավական փոփոխություններ:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք ստորև ներկայացված քայլերը:

- ՍՁ որակավորման մոդելի մշակման համար բաց և մասնակցային եղանակով ձևավորել աշխատանքային խումբ՝ ներգրավելով փաստացի ՍՁ ոլորտի ներկայացուցիչների, փորձագետների, շահագրգիռ նախարարությունների և այլ պետական մարմինների ներկայացուցիչների:

- Մշակել ՍՁ որակավորման հանձնաժողովի աշխատակարգ, սահմանել ներկայացուցչական կազմ և տարբերանշան:
- Սահմանել տարբերանշանի օգտագործման իրավունքի պայմանները և ժամկետը:
- Սահմանել ՍՁ տարբերանշանի կիրառման իրավունք ունեցող կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման մեխանիզմ՝ որոշակի պարբերականությամբ իրականացնելով գնահատում:
- Մշակել ՍՁ-ների առաքելության, գործունեության, ինչպես նաև որակավորման ընթացակարգի և տարբերանշանի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ, ինչպես թիրախավորված՝ ուղղված գործող ՍՁ-ներին, այնպես էլ լայն հանրության շրջանում:
- Հանձնաժողովի կողմից մշակել ՀՀ-ում սոցիալական ձեռնարկատիրության հետևողական զարգացման ռազմավարություն՝ հիմնված ԵՄ-ՏՀԶԿ մոտեցումների և միջազգային լավագույն փորձի վրա: